

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թ-իւ 194

Որպէս Աստուծոյ օրէնքի աղաւաղումն, իր ամենայայտնի կերպով հակօրինականութիւնը հաստատում է որ հաւատացեալներ այլեւս կապած չեն օրէնքով եւ ուստի պարտաւորած չեն դրա հրահանգներին հաւատարիմ մնալ:

**Հակաբաժանական հակօրինականութիւն** – Հակօրինականութեան մի ուրիշ կերպը որն յայտնուեցաւ նոյնիսկ առաքեալների ժամանակում ճանաչած է որպէս հակաբաժանական հակօրինականութիւն (դուալիզմ): Յունական փիլիսոփայութիւնը ուսուցանեց որ հոգեւոր աշխարհքը բարի ու վերագնելի (փրկելի) է իսկ ֆիզիքական աշխարհքը չար ու անվերագնելի (անփրկելի) է: Այսպէս մտածելակերպը մուտք գործեց առաջի դարւայ եկեղեցու եւ Քրիստոնէական մտածողութեանը մէջ, ուսուցանելով որ փրկութիւնը միայն հոգու ու ոչ մարմնի համար է:

Այսպէս տեսանկիւնը հաստատեց որ Աստուած միայն հետաքրքրւած է մարդու հոգեւոր կեանքի ու ոչ նրա ֆիզիքական մարմնի հետ: Հետեւաբար ընդունուած էր որ նրանք որոնք հաւատում են Քրիստոսին կարող են անել իրենց մարմիններով այդ ինչ որ ուզում են՝ վարելով չափազանցօրէն, անփոյթօրէն, եւ անօրինականօրէն՝ մերժելով որեւէ պատասխանատւութիւն իրենց արարքների համար, որովհետեւ ի վերջոյ ֆիզիքականը կարեւոր չէր: Բայց հակառակ այսպէս հեթանոսական հակաբաժանութեան, Աստուածաշունչը չի հակադրում հոգեւոր ֆիզիքականի դէմ, քանի որ այն ուսուցանում է Աստուծոյ ֆիզիքական ստեղծագործութեան էական բարութիւնը՝ ներառեալ մեր ֆիզիքական մարմինները: Աստուծոյ փրկութիւնը ազդում է ամբողջ անձին՝ մարմին ու հոգի, ուր Քրիստոնէական կեանքի ընթացքում երկուսն էլ մաքրում են մեղքից (Ա. Թեսաղոնիկեցիս 5:23), եւ ի վերջոյ յառաջացնելով մի փառաւորած մարմին-հոգի գոյութիւն երկնքումը (Հռովմայեցիս 6:4-6, Փիլիպպեցիս 3:20-21, Ա. Յովհաննէս 3:2):

Պետրոս առաքեալը ներկայացնում է մի դատապարտիչ բացատրութիւն դրանց մասին որոնք հաստատեցին այսպէս հակօրինականութիւնը երբ նա խօսում է սուտ ուսուցիչների մասին Բ. Պետրոս 2-ում: Այս կեղծ ուսուցիչները նմանեցում են անջուր աղբիւրներին, ամպերին, եւ անպտուղ ծառերին. ձեւացնելով եւ խոստանալով ունենալ հոգեւոր ջուր եւ սնունդ, սակայն բացայայտեցին որպէս կեղծաւորներ ունենալով ոչինչ՝ լինելով հոգեւորապէս մեռած ու անույ, եւ ուստի Աստուծոյ դատապարտման տակ (Յուդա 12-13): Սրանք խոստանում են ազատութիւն իսկ աւարտում են մեղքի գերութեան ու սարկութեան մէջ: Իսկ միւս ձեռքի վրայ, ճշմարիտ հաւատացեալներ յորդորում են լինել աւետիսին հաւատարիմ, աղօթել Սուրբ Հոգուն համաձայն, լինել Աստուծոյ հնազանդ, եւ սպասել ու յուսալ Քրիստոսի վերադարձին (Ա. Կորնթացիս 6:19-20, Բ. Կորնթացիս 7:1, Ա. Յովհաննէս 3:3, Յուդա 20-21):

**Հոգեւոր հակօրինականութիւն** – Հակօրինականութեան երրորդ կերպը կոչւում է որպէս հոգեւոր հակօրինականութիւն, կամ հոգեւորութիւն, ուր հետեւողները պնդում են որ ղեկավարում են Սուրբ Հոգու ներքին ձայնովը, եւ ուստի անտեսում են Աստուծոյ գրաւոր Խօսքը: Նրանք որոնք հաստատում են այս տեսանկիւնը վկայում են որ Հոգին առաջնորդում է նրանց ապրելու իրենց կեանքերը Իր ներքին մղումներով եւ ուստի նրանք ազատ են սերտելու Աստուածաշունչը, հասկանալու աստուածաշնչային վարդապետութիւններն ու սկզբունքները, եւ լինելու դրանց հաւատարիմ: Այս չի շատ տարբերում առաջի դարւայ Գնոստիկեաններից (Gnostics) որը շեշտում էին իրենց իբր թէ «զաղտնի գիտութիւնը» (gnosis, Ա. Տիմոթէոս 6:20-21):

Սակայն այսպէս մի տեսանկիւն ոչ միայն հակասութեամբ այլ նաեւ անտրամաբանական է, քանի որ Սուրբ Հոգին է Աստուածաշնչի հեղինակը (Բ. Տիմոթէոս 3:16-17, Բ. Պետրոս 1:20-21): Սուրբ Հոգին շփոթութեան կամ հակասութեան հեղինակը չի, իսկ աշխատում է Իր Խօսքի հետ ու միջոցով, եւ երբէք դրանից առանձին կամ հակառակ (Ա. Կորնթացիս 14:33): Ուրեմն երբ մէկը պնդում է որ Սուրբ Հոգուցն է առաջնորդել անելու մի բան որովհետեւ թէ ստացել է մի զգացմունք կամ մղում, կամ թէ որեւէ անձնական յայտնութիւն կամ երազանք Աստուծոյ, որը անհերքելիօրէն հակասում է Նրա Խօսքին, ապա պարզ է որ այդ Աստուծոյ Հոգին չի որը առաջնորդում է նրան, քանի որ Նա չի խօսում մի ձեղքւած լեզուով:

Թւում է որ այսպիսի հակօրինականութիւնը ներկայ էր Կորնթոսի եկեղեցում, պատճառելով լուրջ խնդիրներ նրանց համար՝ որն հանդուրժել կամ ներմուծել էին Աստուծոյ Խօսքի հակառակ ամեն տեսակի սովորութիւններ եւ գործարարութիւններ: Պողոսը խրատեց ու նոյնիսկ սաստեց նրանց իրենք իրենց Աստուածաշնչից վեր բարձրացնելու համար (Ա. Կորնթացիս 14:36-38, Բ. Թեսաղոնիկեցիս 3:14): Երբ մենք ընդդիմանում ենք հակօրինականներին իրենց անօրինականութեան համար նրանք սովորաբար պատասխանում են կոչելով մեզ որպէս օրինապաշտներ: Այո, օրինապաշտութիւն է պարտադրել կանոններ հաւատացեալների վրայ որն Աստուած չի պատկիրում. բայց օրինապաշտութիւն չի պահանջել Աստուծոյ բարոյական օրէնքի հնազանդութիւնը հաւատացեալներից: Այո աստուածաշնչային է:

Ուստի Սուրբ Գրքի լոյսով եւ Սուրբ Հոգու զօրացնելով մենք կոչւած ենք պահակ կանգնել այս հերետիկոսութիւնների դէմ, պահպանել աւետարանի սրբութիւնն ու եկեղեցու միաբանութիւնը, եւ ուստի բերել փառք Աստուծոյ: